

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՑ 23-Ը ԱՎԱՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՎԱՀՐԱՄ ԳԱՍՊԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ Վարչապետին կից Ատոմային էներգիայի անվտանգության խորհրդի (ԱԷԱԽ) գործադիր քարտուղար, «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ Գլխավոր տնօրեն

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Ավստրիայի Հանրապետություն, ք.Վիեննա, 2018թ. նոյեմբերի 19-23-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցելու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության Կառավարիչների խորհրդի 2018թ. նոյեմբերի 19-23-ը կայացած նիստին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

1. ԱԷՄԳ Գլխավոր տնօրենի և նրա տեղակալի ելույթները տեխնիկական համագործակցության և 2019թ. ԱԷՄԳ-ն կողմից առաջարկվող ծրագրի քննարկում (փաստաթուղթ GOV/2018/44),

2. 2018թ. տեխնիկական համագործակցության արդյունքների գնահատումը, համաձայն GOV/2018/45 փաստաթղթի,

3. Մերձավոր արևելքում և Հյուսիսային Կորեայում միջուկային զենքի ստեղծման և կանխարգելման խնդիրների քննարկում,

4. Մերձավոր արևելքը ոչ միջուկային գոտի ստեղծելու արաբական երկրների կատարված առաջարկի քննարկում,

5. Միջուկային ստուգումների, այդ թվում երաշխիքի համաձայնագրի կիրառում Մերձավոր արևելքում և Հյուսիսային Կորեայում և այլն:

